

ԵԱՀԿ գրասենյակը աջակցում է ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտի» վերանորոգմանը

ԵՐԵՎԱՆ, հոկտեմբերի 11, 2005թ.--ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ վերանորոգման աշխատանքներից հետո այսօր նորից վերաբացվել է «Իրավաբանական ինստիտուտը», որտեղ վերապատրաստվում է բանտային համակարգի աշխատակազմը:

Նոր վերանորոգված ուսումնական հաստատությունը, որը ունի երկու դահլիճ և մեկ համակարգչային սենյակ կկարողանա տարեկան վերապատրաստել ՀՀ քրեակատարողական համակարգի մոտ 300 աշխատակցի: Բացի այդ, հատուկ մասնագիտացված կարճաժամկետ դասընթացներ կկազմակերպվեն 40-50 նոր ընդունված աշխատակիցների համար, ինչպես նաև 27 մասնագետների համար, որոնք աշխատում են վերականգնողական և վերինտեգրման ոլորտներում:

«Վերջին տարիների ընթացքում Հայաստանը հասել է զգալի արդյունքների իր քրեակատարողական համակարգի բարեփոխման գործընթացում», ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինը:

«Հուսով եմք, որ սարքավորումներով հագեցած և վերազինված վերապատրաստման կենտրոնը ուժեղ խթան կհանդիսանա բանտային համակարգի աշխատակիցների վերապատրաստումը և ուսուցանումը ավելի ինստիտուցիոնալ և կանոնավոր հիմքերի վրա դնելու համար», ավելացրեց նա:

Քրեակատարողական համակարգի աշխատակիցների վերապատրաստումը հիմնական նախապայման է հանդիսանում՝ դատապարտվածների իրավունքները ավելի արդյունավետ պաշտպանելու համար:

2002-2004թթ. ԵԱՀԿ-ն ակտիվորեն աջակցել է ՀՀ բանտային աշխատակազմի վերապատրաստման հարցում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուսումնական ծրագրի մշակմանը, որի հիմքում դրված կլինի այլ երկրների քրեակատարողական հիմնարկներում աշխատող միջազգային մասնագետների փորձը և փորձառությունը: